

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ՈՒԹ՝ ՆՈՐ՝ ԸՆԾԱՅԵԱԼՆԵՐ

Փառաբանական և ցնծութեան օր մըն էր Ս. Աթոռիս, Միաբանութեան և Հայց. Եկեղեցիին համար 12 Հոկտ.ի այս վերջին կիրակին։ Վարագայ Ս. Խաչի տօնին օրը, Ս. Լոյս Գերեզմանին տօնը, Ս. Աթոռայ Տեղապահին՝ Գեր. Տ. Մեսրոպ Սրբազանի ձեռնադրութեամբ, և վարժարանաց Տեսուչ Տ. Կիւրեղ Վրդ.ի խորատու խաղութեամբ — որուն հետ էին նաեւ Տ. Տ. Նորայր և Տիրան վարդապետները — աւագ սարկաւազութեան սուրբ աստիճանին արժանացան ութ պատուական պատանիներ՝ անդամակցելով Ս. Ուխտիս՝ ի ծառայութիւն Ս. Աթոռին և Հայց. Առաք. Ս. Եկեղեցւոյն։ Անոնց անուններն են. —

Վարդգէս Պատմասեան	(Զոնկուլապցի)
Հրանդ Մինասեան	(Կ. Պոլսեցի)
Սարգիս Աւետիսեան	(Զմիւռնիացի)
Բարգէն Թումայեան	(Պարտիզակցի)
Արիստակէս Սոմուհեան	(Պոլսեցի)
Աւետիս Անարքեան	(Այնթապցի)
Կարապետ Կրճիկեան	(Կ. Պոլսեցի)
Տիգրան Գուգուհեան	(Զմիւռնիացի)

Ժառանգաւորաց Վարժարանի շրջանը աւարտած ըլլալով՝ իրենց Մեկրօնեան Սաներ՝ յաջորդ տարի Ընծայարանի առաջին դաստարանը պիտի կազմեն ասոնք, չորս տարուան շրջան մը եւս բոլորելով՝ իրենց միայն ու հոգին մշակելով ու պատրաստուելով քահանայութեան և վարդապետութեան նուիրական կոչումին։

Աշխատասէր և խոստմնալից երիտասարդներ՝ ասոնք կազմեցին վերջին դասարանը, որ Ս. Աթոռիս և Ազգին յաւիտ որդացեալ անմահ Պատրիարքին Դուրեան Սրբազանի շունչէն և հոգիէն ծծելու քաղատարութիւնը ունեցաւ։ Մէկուկէս տարի դաս առին անոնք մեր ժամանակներու Մեծ Վարդապետէն՝ որուն աշակերտներուն երկա՛ր ու լուսաւոր ցանկը այս երիտասարդներով կը փակուի։

Պատարագիչ և ձեռնադրող Տեղապահ Սրբազանին կողմէ զգաճուած շեշտերով կարդացուած աղօթքներու ազդեցութեան ներքեւ, Ս. Յարութեան վեհաշուր գմբէթին տակ, Բարիին ու Հոգեւորին յաղթանակին խորհրդանշանը եղող Ս. Գերեզմանին առջեւ՝ ի՛նչ անպատմելի հոգեկան վայելք էր տեսնել ու զգալ Հոգեւորին ու Յարացուցականին, Բարիին ու Անձնուիրութեան այս աշխարհի խորհապատիր ու ետմով գործերուն վրայ տարած յաղթանակը՝ այս երիտասարդներուն մէջ։ Նմանօրինակ նուիրումներով է որ մեր ընկճուած Ազգը ու անոր Եկեղեցին յարութիւն պիտի առնեն, Քրիստոսի Սիրով և Ուժով ուսնացած։

Արդարեւ կեանքի ճանապարհին վրայ իրենց ընթացքը նոր ակօղներ են ասոնք, Թերեւս մտածենք. «գեռ ի՛նչքան կայ մինչև հանգրուան»։ Սա-

կայն երբ Աստուծոյ շնորհը միշտ մեր վերին ըլլայ և Քրիստոսի սէրը սրտերնուս մէջ՝ ճամբան պայծառ պիտի ըլլայ և ուղիղ, և հանգրուան ժամանումը՝ փառաւոր և յաղթական։

Սիւն իր բոլոր ընթերցողներէն կը խնդրէ որ աղօթեն այս ութ երիտասարդներու համար մասնաւորապէս, որպէսզի Տիրոջ Հոգին միշտ անոնց վրայ ըլլայ և Աւետարանի կեանքովը զօրանան, պատրաստուելու Աստուծոյ Ս. Սեղանին սպասարութեան և Անոր ժողովուրդին ծառայութեան։

«Սո՛ւրբ արա զնոսա ճշմարտութեամբ բով, զի քո բանդ ճշմարտութիւն է» (Յովհ. Ժէ. 17.)։

Կիրակիի ձեռնադրութենէն առաջ՝ շաբաթ երեկոյ, Վարագայ Ս. Խաչի նախատօնակին՝ դպրութեան չորս աստիճան տրուեցաւ հետեւեալներուն. —

Տիգրան Տէվոյեան, Մարկոս Մալխասեան, Հայկ Եանրգեան՝ միաբաններ։ Աւետիս Անարքեան, Կարապետ Կրճիկեան, Տիգրան Գուգուհեան, Արշակ Դաւուտեան, Միրան Մզրազեան, Յարութիւն Հատիտեան, Խահակ Եսայեան, Շնորհր Համբարեան, Թովմաս ձէրէնեան, Մանուկ Ուզունեան, Արգար Լուարարեան, Դաւիթ Պոյաճեան, և Նուպար Թէրզեան՝ Ժառ. աշակերտներ։

Յիշեալներէն ուրաք կրելու իրաւունք ստացան Մարկոս Մալխասեան, Հայկ Եանրգեան, ինչպէս նաեւ Միրան Յովհաննէսեան։

Տէրը իր եկեղեցիին սպասարները իր շնորհովը առատացնէ։

ՎԱՐԻՍՊԵՏԱԿԱՆ

ՄԱՍՆԱԻՈՐ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՏՐԻԶՈՒԹԻՒՆ

23 Օգոստոս 1930, Շաբաթ երեկոյեան ժամերգութենէն վերջ, Ս. Յակոբայ Տաճարին մէջ Պատր. Տեղապահ Գեր. Տ. Մեսրոպ Ս. Եպս. Նշանեանի կողմէ վարդապետութեան Մասնաւոր Իշխանութիւն տրուեցաւ Ս. Ուխտիս հետեւեալ տասներեք Արեղաններուն։

1.—	Հոգ. Տ. Եսայի	Վրդ. Ամբարջեան
2.—	» Տ. Նորայր	» Պօղարեան
3.—	» Տ. Տիրան	» Ներսայեան
4.—	» Տ. Դարեգին	» Պիւլպուլեան
5.—	» Տ. Դաւիթ	» Չալրգեան
6.—	» Տ. Սիւն	» Մանուկեան
7.—	» Տ. Հայկազուն	» Արթաշատեան
8.—	» Տ. Պարգեւ	» Վրթանէսեան
9.—	» Տ. Գեղամ	» Քասիմեան
10.—	» Տ. Զգօն	» Տէր Յակոբեան
11.—	» Տ. Սերովրէ	» Մանուկեան
12.—	» Տ. Շաւարշ	» Դուլումեան
13.—	» Տ. Զնոր	» Վահանեան

Երջանկայիշատակ Դուրեան Սրբազանի ձեռնաւորն աշակերտներէն են այս Վարդապետները (մի քանի քաջառուքներով), և տասներեքն ալ կը ջանան անոր ոգիին հաւատարմութիւն ըլլալ Հայց. Եկեղեցիի այս կարեւոր Տան մէջ. զանոնք արդէն ներկայացուցած և ծանօթացուցած է ՍԻՈՆ, իր ընթեր-

ցողներուն մէկէ աւելի առիթներով, տակաւին մօտիկ թիւերու մէջ, Կր խնդրենք մեր ընթերցողներէն որ ազօթեն ասոնց զաւազանի ծաղիման եւ խօսքերուն ու գործերուն պտղաբերման համար: Որպէսզի կարող ըլլան հետեւել Սրբազան Պօղոս Առաքելի պատուէրին: «Վերակացու լինել հաւատարիմ բանին վարդապետութեան, զի կարող իցէ եւ միսիթարի ողջմտութեամբ վարդապետութեան, եւ զհակառակորդսն կշտամբել»:

ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ 1930 — 1931

Միաբ. Ընդհ. ժողովը սոյն տարուան իր Դ. Նիստը գումարեց Սեպտ. 8-ին:

Օրակարգ. — «Ս. Էջմիածին գումարուելիք Ազգ. Եկեղեցական ժողովին Միաբանութեան ներկայացուցիչ (սպառզամաւոր) Գեր. Տ. Սմբատ Եպս. Գազազեանի դրկուելիք Հրահանգի պատրաստութիւնը»:

Յետ խորհրդակցութեանց՝ որոշում. — «Յիշեալ Հրահանգի մէկ ծրագիրը պատրաստուի յատուկ մասնաժողովի մը միջոցաւ»:

Այս Մասնաժողովի անդամ ընտրուեցան հետեւեալները. —

Գեր. Տ. Մկրտիչ Եպս. Աղաւունքի, Հոգ. Տ. Կիրեղ Վրդ. Իսրայէլեան, Տ. Նորայր Վրդ. Պողարեան, Տ. Տիրան Վրդ. Ներսոյեան, Տ. Գարեգին Վրդ. Պիլլալիւեան:

Մասնաժողովը իր աշխատանքին սկսաւ Գեր. Տեղապահ Ս. Հօր 10 Սեպտ. 1930 թիւ 4 պաշտօնական հրաւերին վրայ, նախագահութեամբ Տ. Մկրտիչ Սրբազանի եւ ատենադպրութեամբ Տ. Գարեգին Վարդապետի:

Միաբ. Ընդհ. ժողովը իր սոյն տարուան Ե. Նիստը գումարեց Սեպտ. 9-ին:

Օրակարգ. — «Գննութիւն եւ վաւերացում 1930—1931 տարեշրջանի Ս. Աթոռոյս ելմտացոյցին»: Կարդացուեցան Տեղապահ Սրբազան Հօր թիւ 10295/15 Սեպտ. 8-ի պաշտօնագիրը եւ Պատկ. Տեօթէն ժողովոյ կողմէ ներկայացուած 1930 — 1931 Տարեշրջանի ելմտացոյցը:

Որոշում. — «Յատուկ մասնաժողովի մը միջոցաւ կատարել քննութիւնը սոյն ելմտացոյցին»:

Մասնաժողովին անդամ ընտրուեցան հետեւեալները. —

Հոգ. Տ. Տ. Վարդապետը՝ Ներսէս Թորոսեան, Նորայր Պողարեան, Տիրան Ներսոյեան, Գարեգին Պիլլալիւեան եւ Սիոն Մանուկեան:

Մասնաժողովը իր աշխատութեանց սկսաւ Գեր. Տեղապահ Ս. Հօր 10 Սեպտ. 1930 թիւ 5 պաշտօնական հրաւերով, առնապետութեամբ՝ Տ. Տիրան Վարդապետի եւ ատենադպրութեամբ Տ. Նորայր Վարդապետի:

ԱՆՈՒԱՆՈՒՄ ՆՈՒ ՊԱՇՏՈՆԵԱՆԵՐՈՒ

Տեօթէն ժողովոյ 13 Օգոստոս 1930 թիւ Նիստին մէջ եղան հետեւեալ անուանումները.

1. — Ընդունուելով Տն. ժողովի անդամ Գեր. Տ. Մաաթէս Ս. Եպս. Գայրզնեանի առողջական պատ-

ճառներով տուած հրաժարականը Ելեւմտից եւ Կալուածոց Տեսչութեանց պաշտօններէն՝ կազմուեցաւ երեք անդամէ բաղկացեալ Ելեւմտական եւ Կալուածական Յանձնաժողով մը յանձնինս —

Հոգ. Տ. Գէորգ Վրդ. Ճանսգեանի, Նախագահ.

» Տ. Հայկազուն Վրդ. Արարամեանի, Անդամ եւ Գանձապետ.

» Տ. Սերովբէ Վրդ. Մանուկեանի, Անդամ եւ Հաշուակալ.

2. — Ս. Աթոռոյս Մատակարար անուանուեցաւ Հոգ. Տ. Դաւիթ Վրդ. Զալըզեան.

3. — Ա. Թարգման կարգուեցաւ Հոգ. Տ. Պարգեւ Վրդ. Վրթանէսեան:

ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ

ԿԻՒՂՊԷՆՎԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

28 Օգոստոս 1930 Հինգշաբթին Միաբանութեան եւ Հայ համայնքին համար ուրախաւթի օր մը եղաւ: Յետ միջօրէի ժամը 4-ին, Պատր. Տեղապահ Գեր. Տ. Մեսրոպ Սրբազան. շրջապատուած Միաբանութիւնէն եւ ժառանգաւոր աշակերտներէն, եւ ի ներկայութեան զաղութիս պատուական անդամներուն, կատարեց Կիւղպէնիան Մասնադարանի աւարտած հիմերուն վրայ դրուելիք առաջին անկիւնաքարի օրհնութիւնը: Աւուր պատշաճի կրօնական արարողութիւնէ մը վերջ Նորին Սրբազնութիւնը իր իսկ ձեռքով զետեղեց առաջին անկիւնաքարը, որուն մէջ յետ ընթերցման դրուեցաւ բիրեղեայ ընդունարանով մագաղաթէ յիշատակարան մը, որ է հետեւեալը.

«Ի Բաւեհրորդում ուրեհրորդում աուուր աւմանանն Օգոստոսի հազար ինն հարիւր երեսուն ամի՝ ձեռամբ եւ օրհնութեամբ Սրբոյ Աթոռոյս Պատրիարքական Տեղապահ Տ. Մեսրոպայ Սրբազան Եպիսկոպոսի Նաանան եւ մասնակցութեամբ Միաբանական Ուխտին Սրբոց Յակօրեանց, Լեզաւ իմին Գորաւն Մասնադարանին, զոր վիսեմանն նախապատրաստեալ իւրով կառուցանէ Վանմաւուր եւ մեծահաւաս Դպրատան Պէյ Կիւղպէնիան, ի յիւստակ հանգուցեալ ձեռագց իւրոց Սարգսի եւ Տիրուհւոյ, եւ ի պատիւ Բաւեհրաշխան Յիսակիայ Յօրեկիւնի Տ. Տ. Նախեալ Դուրեան Սրբանկալիւսի եւ Առաքելաւորի Սրբազան Պատրիարքի Առաքելական Ս. Աթոռոյս Նաւաղմի»:

«Երանի՛ որ ունիցի զաւակ ի Սիոն»
(Եսայի ԼԱ. 9)

Յարդ շէնքին կէսէն աւելին աւարտած է արդէն, եւ կը լուսանի թէ լրումն ալ շատ չյայտադիր:

Վանմաւուր քարերարին այս ձեռնարկը՝ վանուց մէջ յոյժ կարեւոր պակաս մը պիտի լցնէ: Վանքը վայելուչ Մատենադարանով մը օժտել անոր մտաւորական բարձրացման սատարելու առաջին քայլն է: Ամէն անոնք որ այս նոր շէնքի մէջ կրօնի եւ Աւետարանի յոյր պիտի ստանան յօգուտ Ազգին եւ Եկեղեցիին՝ իրենց շրթունքին վրայ պիտի ունենան օրհնէք մը քարերարին համար:

ԼԶՄԻԱՄԻՆ ԵՐԹԱԼԻՔ ՊԱՏԳԱՄԱՌՈՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Ս. Էջմիածնի մէջ Հոկտեմբեր 26 ին զումարիկի Ազգային-Երկրորդական ժողովին Երուսաղէմի Պատրիարքական թեմի Հայ ժողովրդեան կողմէ մասնակցելիք աշխարհական պատգամաւորի ընտրութիւնը տեղի ունեցաւ Օգոստոս 24 ին:

Ըստ հրաւերի Պատր. Տեղապահ Գեր. Տ. Մեսրոպ Սրբազանի, ժամը 9.30 ին ժողով զումարուեցաւ Լուսարարապետարանին մէջ նախագահութեամբ Նորին Սրբազնութեան եւ ի ներկայութեան հետեւեալ հինգ Պատուիրակներու:

Տիար Ղ. Մերկերեան (Պատուիրակ Երուսաղէմի)
» Գ. Պանգլեան (» Բեթղէմի)
» Գ. Թաղէոսեան (» Էսֆայի)
» Ս. Տ. Մովսէսեան (» Հայֆայի)
» Գ. Մխալեան (» Անդր-Յորդանանի)

Տեղապահ Սրբազան ժողովը բանալով, յօտրեալ չափով արտասանեց Երջանկայիշատակ Վեհ. Տ. Տ. Դեռոգ Ե. Կաթողիկոսի հոգւոյն ի հանդիստ, եւ ապա շնորհաւորելով ներկայից պաշտօնը. հրաւիրեց կատարել Պաղեստինի Հայ ժողովրդեան Պատգամաւորի ընտրութիւնը:

Ժողովը իր անդամակիցներէն Տիար Ղ. Մերկերեանը — որ ասկէ առաջ ալ իրբեւ Պաղեստինահայութեան աշխարհական Պատգամաւորը Ս. Էջմիածնի գաղափար Հայրապետական ընտրութեան առթիւ — միաձայնութեամբ պատգամաւոր ընտրեց: Տիար Ղ. Մերկերեան շնորհակալ ըլլալով հանդերձ ցոյց տրուած վստահութենէն, ինչ ինչ անձնական պատճառներով եւ յառաջացեալ տարիքին հետեւանօր ձեռնարկի եղաւ այդ պաշտօնէն: Ժողովը հարկադրուեցաւ ընդունիլ Տիար Մերկերեանի հրաժարականը եւ յարմար դատեց արտասահմանէն ազգային մը ընտրել: Այս առթիւ նկատողութեան անունով լիւրջ խորհրդակցութիւն տեղի ունեցաւ, որմէ ետեւ Տիար Թ. Ծառմանեանի մասին ստացուած բարի վկայութիւնները, միաձայնութեամբ Պատգամաւոր ընտրուեցաւ ան եւ ընտրութիւնը հեռագրուեցաւ Տիար Թ. Ծառմանեանին, որ իր պատասխան հեռագրով յայտնած է, թէ սիրով կ'ըստանան այդ պաշտօնը եւ յանձն կ'առնեն իր իսկ միջոցներով հոգալ Ս. Էջմիածնի ուղեւորութեան եւ յարակից ծախքերը:

ԽԱՉՎԵՐԱՅ ԵՒ ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

28 Սեպտ. 1930, Խաչվերացի Կիրակի օր Ս. Յակոբայ Մայր Տաճարին մէջ եպիսկոպոսական հանգիստաւոր Ս. Պատարագ մատուցուեցաւ, եւ այդ առթիւ մաղթանքներ եղան Ազգային Մեծանուն Բարերար Ազգ. Տիար Կ. Մեկոնեանի արեւշատութեան համար: Ժամաւորներ էր Գեր. Տ. Մկրտիչ Ս. Եսայ. Ազանունի, որ առաջ պատշաճի գեղեցիկ բարոյ մը խօսեցաւ: Յաւարտ Ս. Պատարագի տեղի ունեցաւ Հոգեհանգստեան մատուոր պաշտօն, Ս. Աթոռոյ Բարերարին Ողբացեալ եղբոր Դիւղարի, եւ Մեկոնեան գերդաստանի համարէն ննջեցեցոյ յիշատակին: Երեկոյեան, Միարանական ընթրիքի պահուն ալ կրկնուեցան հոգեհանգստեան աղօթքները, Միարանութեան եւ Ժառանգաւորաց Վարժարանի աշակերտաց կողմէ:

ՀԻՄՆԱՐԿԷՔ ԵՐՈՒՍԱԳԷՄԻ ՆՈՐ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻՆ

2 Սեպտ. 1930, Երեւաքի կէսօրէն վերջ ժամը 5.30ին տեղի ունեցաւ Երուսաղէմի նոր կառուցանելի Քաղաքապետանի (Էսթայի) նախագահին վրայ) նիստ: Նախօրեան պաշտօնական հանդիսութիւնը, որուն ներկայ գտնուեցան Տեղապահ Սրբազանը, հետեւ ունենալով վանուցաւ Ա. Թարգմանը եւ Մեծ. Դիւանապետը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՔ

6 Սեպտ. 1930, Շաբաթ կէսօրէն առաջ ժամը 10ին Երուսաղէմի Քաղաքապետ Վեհ. Բաղդաթ Պէյ Նեւաւիայի աջակց Պատրիարքարան, եւ ի բացակայութեան Տեղապահ Ս. Հօր. Դանիլինի մէջ ընդունուեցաւ Տ. Կիրեղ Վրդ. Իսթայէլեանի, Ա. Թարգմանին եւ Մեծ. Դիւանապետին կողմէ:

Իսկ 15 Սեպտ. 1930, Երկուշաբթի ժամը 9.45ին (կ. ա.) Պատրիարքարան աջակց Երուսաղէմի Ղպոսոյ Գեր. Տեսուչը, եւ Դանիլինի մէջ ընդունուեցաւ Պատր. Տեղապահ Մեսրոպ Սրբազանի կողմէ, որուն մօտ կը գտնուէին Տ. Դեռոգ Վրդ. Ճանաչեան եւ վանուցաւ Ա. Թարգմանը:

ՎԵՐԱԲԱՅՈՒՄ ՎԱՐՃԱՐԱՆԱՅ

Ս. Աթոռոյ Ժառանգաւորաց Վարժարան, Ազգ. Երկսեռ Նախակրթարանն ու Մանկապարտէզը վերաբացուեցան 30 Սեպտ. 1930 Երեւաքի օր, եւ դասախօսութիւն կանոնաւորապէս վերականգնուեցան Հոկտեմբեր 6, Երկուշաբթիին:

Միարանութեան անդամներէն այս օրի նոր ուսուցիչ կարգուեցան, Տ. Տ. Նորայր, Տիրան, Սիմեոն Զգան Վարդապետներ: Առաջին Երկուր Ժառանգաւորացի եւ Բնակարանի, եւ վերջիններ Ժառանգաւորացի եւ Նախակրթարանի (Ա. Թարգմանչաց Վրդին) համար:

Ազգ. Մանկապարտէզի համար ալ Տիկին Տիգրանուհի Պարոնեան Հալպէն տեղափոխուած եւ իր Մանկապարտէզավանդանին ձեռնարկած է իր պաշտօնին:

Տ ԵՐ Ա Վ Ա Ն

Ս. Աթոռոյ «Բնագրեաց» միաբաններէն Տիգրանակերտի ծերանալող Սարգիս Պապա Պաղտատեան, իւր ծերութեան մէջ կնեց իր մանկանացուն Սեպտ. 14ի Կիր. առաւօտ ժամը 6ին: Նոյն օրը, Երեկոյեան ժամերգութենէն վերջ պաշտան հանդիսութեամբ, եւ ի ներկայութեան Միարանութեան անդամներուն եւ ժողովրդեան, կատարուեցաւ հանգուցելոյն յուղարկութիւնը, եւ մարմինը ամփոփուցաւ Ս. Փրկչի Ազգ. Գերեզմանոսան մէջ:

Հանգուցեալը մօտաւորապէս 50 տարեկան իրբեւ աշխատող միաբան նուիրուած է Ս. Յակոբեանց Աթոռին եւ իրբեւ Սեւեկապետ վանուցաւ մէջ ունեցած է անխնայ եւ անմեղ ծառայութիւն մը, որ մեծապէս գնահատուած է Միարանութեան կողմէ:

Տէր վարձատրէ՛ զինք իր նոր օրեկանին մէջ: